


# 5 ՔԱՅԼ

## ԻՆՉՊԵՍ ԳՐԱՆՑԵԼ

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳԻՐՔ

www.src.am

# 1 ՔԱՅԼ

Էլեկտրոնային դրամարկղային գիրք հաշվառելու համար կազմակերպությունը կամ ԱԱՀ վճարող անհատ ձեռնարկատերը իր օգտանուն-գաղտնաբառով պետք է մուտք գործի Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային file-online.taxservice.am համակարգ և անձնական գրասենյակում՝ հաշվետվությունների բաժնից, ընտրի էլեկտրոնային դրամարկղային գրքի գրանցման՝ 154-րդ հայտը։

## 2 ՔԱՅԼ

Հայտը բացելուց հետո պահանջվող տվյալները համակարգում լրացվում են ինքնաշխատ, որից հետո անհրաժեշտ է ընտրել արժույթը և սեղմել գրանցել կոճակը:

### ! Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր արժույթի համար հարկ վճարողը պետք է վարի առանձին էլեկտրոնային դրամարկղային գիրք:

# 3 ՔԱՅԼ

Լրացված և ծրագրի միջոցով ձևավորված դրամարկղային գրքերի գրանցման հայտն ստանում է հերթական համար:
Ապա հայտն անհրաժեշտ է վավերացնել էլեկտրոնային ստորագրությամբ և ուղարկել file-online.taxservice.am համակարգի միջոցով:

# 4 ՔԱՅԼ

Կազմակերպության կամ ԱԱՀ վճարող անհատ ձեռնարկատիրոջ կողմից գրանցման հայտը պատշաճ լրացվելուց և ուղարկվելուց հետո file-online.taxservice.am համակարգում՝ հարկ վճարողի էլեկտրոնային դրամարկղային գրքերի դարանում, ստեղծվում է գրանցման հայտով ներկայացված էլեկտրոնային գիրքը:

# 5 ՔԱՅԼ

էլեկտրոնային գիրքն ստեղծվելուց հետո, համակարգի կողմից, հարկ վճարողին անմիջապես ուղարկվում է ծանուցում՝ գրանցման հայտով ներկայացված էլեկտրոնային դրամարկղային գրքի գրանցման մասին:

## ՀԻՇԵՑՈՒՄ

2024 թվականի հունվարի 1-ից դրամարկղային գործառնություններն անհրաժեշտ է գրանցել բացառապես էլեկտրոնային եղանակով վարվող դրամարկղային գրքում: